ԿԻՆԸ ՀՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լիանա Դալլաքյան

Կինը յուրահատուկ էակ է: Դեռևս շատ հին ժամանակներից կինը համարվել է տան, օջախի պահպանողը, արժանի ուսուցիչ աճող սերնդի համար և հավատարիմ ընկեր իր ամուսնու համար: Բայց այս ամենի հետ մեկտեղ հրեա կանայք ունեն նաև հոգևոր պարտականություններ և նրանց տունը կարծես վերածվում է Աստծո տաճարի: Հրեական գրականության հիմնական ստեղծագործությունները, որոնք ավելի քան 3000 տարի գրվել են համարյա բացառապես տղամարդկանց կողմից, պարունակում են կնոջ նկատմամբ տարբեր հայացքներ՝ պայմանավորված ինչպես հրեա ժողովրդի պատմության տարբեր շրջաններում նրանց մշակութային և կենցաղային ապրելաձևով, այնպես էլ այդ աշխատությունների հեղինակների՝ կնոջ վերաբերյալ ունեցած անհատական կարծիքներով:

Կինը հրեականության մեջ ունի աննախանձելի դեր: Ընդհանրապես, պատմականորեն հրեական կրոնում կանանց շատ քիչ իրավունքներ է վերապահված եղել: Նրանք չունեին այն բոլոր իրավունքները, որոնք ունեին տղամարդիկ: Համաձայն Թալմուդի՝ ամուսինն իրավունք ունի բաժանվել կնոջից, եթե վերջինս ուղղակի կոտրել է ամուսնու տան սպասքը կամ եթե ամուսինը գտել է ուրիշ՝ ավելի գեղեցիկ կին: Թալմուդը նաև պահանջում է, որ հրեա տղամարդիկ բաժանվեն նաև այն դեպքում, երբ կինն ուտում կամ խմում է փողոցում, երբ երեխային կրծքով կերակրում է փողոցում, երբ տասը տարվա ընթացքում չի կարողանում երեխա ունենալ և այլն: Իսկ ինքը՝ կինը, ամուսնալուծություն պահանջելու իրավունք չունի[1]: Թալմուդականները նաև կնոջը վերագրում էին միայն բացասական հատկություններ՝ ծուլություն, նախանձոտություն, շատախոսություն, հիստերիա և այլն: Թալմուդը կնոջն արգելում էր զբաղվել հասարակական աշխատանքով: Հրեա կինը պարտավոր էր մնալ տանը՝ իր ամուսնու և զավակների կողքին, այլ ոչ թե փողոցում, ինչպես որ վարվում էին ոչ առաքինի կանայք: Հրեա կնոջ առօրյան սովորաբար սկսվում է վաղ

[1] http://al-hayat.ru/publ/2-1-141.

առավոտյան՝ արևածագից առաջ (Առակաց 31:15): Որտեղ էլ որ ապրեն հրեաները, նրանց կանայք ստանձնում են տնային բոլոր պարտավորությունները՝ իրենց ամուսիններին և երեխաներին ապահովելով առօրյայում անհրաժեշտ ամեն ինչով[1]: Ընտանիքի մայրը պարտավոր է իր երեխաներին սովորեցնել ճիշտ կյանք վարել, թե ինչպես կարող են նրանք հետագայում իրենց գումարը ճիշտ և խնայողաբար օգտագործել (Առակաց 31:14-18): Նա նաև պարտավոր է իր երեխաներին սովորեցնել սուրբգրային կանոնները (Երկրորդ օրենք 6:6-7): Բայց հուդայականության մեջ կինը, բացի իր ընտանիքի անդամներից, պարտավոր է հոգ տանել նաև հիվանդների, ծերերի, միայնակների և նրանց մասին, ովքեր ունեն դրա կարիքը: Սրանով դրսևորվում է հրեա կնոջ բարեգործությունն ու բարեգթությունը (միցվա):

Ըստ Թալմուդի՝ տղամարդը կին ընտրելիս չպետք է ուշադրություն դարձնի նրա գեղեցկության կամ մտավոր ընդունակությունների վրա: Սակայն, այնուամենայնիվ, կինը երբեք չի կարող տղամարդու հետ հավասար իրավունքներ ունենալ, քանի որ Աստվածաշնչի համաձայն՝ Աստված կնոջն ստեղծել է տղամարդու կողոսկրից, որպեսզի նա համեստ լինի: Կինն ստեղծվել է հանուն տղամարդու: Աստվածաշնչում խոսվում է նաև այն մասին, որ Աստված, արարելով Ադամին, նրան հոգի է տվել, մինչդեռ Եվայի՝ հոգի ունենալու մասին Աստվածաշնչում ոչինչ չի ասվում[2]:

Հրեաների մոտ կնոջ համար պատասխանատու է կամ նրա եղբայրը, կամ հայրը, կամ էլ ամուսինը: Հրեաները կնոջ այս կախյալ վիճակը բացատրում են հետևյալ կերպ. համաձայն Աստվածաշնչի՝ առաջին մեղքը, որ եղավ կնոջ՝ Եվայի պատճառով, հիմք է հանդիսացել երկրի բոլոր դժբախտությունների և տառապանքների համար: Եվ հենց դա է պատճառը, որ կինը, չնայած իր անսահման նվիրվածությանը, չի ներվում սերունդների կողմից, ովքեր գտնում են, որ կնոջ մեղքով է, որ ողջ մարդկությունը զրկվեց դրախտի վայելքներից: Յուրաքանչյուր հրեա հավատացյալ տղամարդ իր ամենօրյա աղոթքի մեջ պետք է շնորհակալություն հայտնի Աստծուն, որ իրեն կին չի ստեղծել: Իսկ կանայք իրենց աղոթքի մեջ պետք է շնորհակալություն հայտնեն Աստծուն, որ իրենց ստեղծել է

---

[1] **Judith R.** Baskin, Keneth Seeskin, Jewish history, religion and culture, USA, 2010, p. 357.

[2] **Л. Х. Авшалумова,** Иудаизм и женщина, Махачкала, 1977, с. 8.

ամուսիններին հնազանդվելու և ենթարկվելու համար:

Հրեա կնոջ պատիվն ու արժանապատվությունը գտնվում են շատ բարձր մակարդակի վրա: Նրանց մոտ ավելի շատ ուշադրություն է դարձվում կնոջ արժանիքներին, քան նրա գեղեցկությանը: Եթե կինը գեղեցիկ լինելու ցանկություն ունի, ապա այդ գեղեցկությունն առաջին հերթին պետք է վերաբերի ոչ թե կնոջ արտաքինին, այլ նրա զսպվածությանը, բարությանը, ինքնազոհության կարողությանը և այլ ներքին արժանիքների:

Այն հարցը, թե արդյոք կանայք ինչ դեր են ունեցել սինագոգի պաշտամունքում և ընդհանրապես սինագոգում, ենթարկվել է բազմաթիվ քննարկումների, բայց միանգամայն հստակ է, որ տղամարդկանց աղոթքից բացի՝ կարևոր էր նաև կանանց աղոթքը[1]: Կանայք, ի տարբերություն տղամարդկանց, չունեն ժամերգության համար հատուկ հագուստ, սակայն վերջին ժամանակներում ընդունված է օգտագործել հատուկ թիկնոցներ: Իսկ տղամարդիկ կրում են հատուկ շալ, որը կոչվում է տալես: Կանայք չէին կարող գլխավոր դեր ունենալ սինագոգում՝ անմաքրության շրջանի պատճառով: Նրանք իրավունք չունեին ընթերցել նաև ամենօրյա աղոթք կամ կատարել ուխտագնացություն դեպի Երուսաղեմ գլխավոր տոների ժամանակ: Հրեականության շրջանում կանանց աղոթքի վայրը առանձնացվում էր տղամարդկանց աղոթքի վայրից: Բայց այսօրվա աղոթատեղիներում կանայք և տղամարդիկ աղոթում են միասին: Հրեական սովորության համաձայն՝ աղոթքներն ու ծիսակատարությունները կապված են օրվա որոշակի ժամանակահատվածների հետ, որոնք պարտադիր են տղամարդկանց և ոչ այնքան պարտադիր կանանց համար, քանի որ նրանք մշտապես զբաղված են տնային հոգսերով: Սակայն այս ամենը չի նշանակում, որ կանայք մասնակցություն չեն ունեցել սինագոգի ծառայություններին, ընդհակառակը, նրանք մասնակցել են և երբեմն էլ ստացել են հատուկ տիտղոսներ: Կանայք կրոնի դասերն անցնում էին տանը: Հին հրեականության մեջ եղել են այնպիսի ուսուցիչներ, ովքեր դժգոհում էին, որ կանանց տրվում էր շատ ավելին, քան տարրական կրոնական ուսուցումն էր: Բայց սա փոքրամասնության տեսակետն է: Ոմանք էլ կարծում էին, որ կնոջ համար պարտադիր չէ Թորայի ուսու-

---

[1] **Davies W. D.,** Finkelstein L., The Cambridge history of Judaism, Volume Three, Cambridge University Press, 2008, p. 358.

ցումը: Եվ այս ամենի արդյունքում շատ քիչ կանայք էին սովորում Թորան[1]:

Կինն Աստվածաշնչում և պարականոն գրքերում հանդես է գալիս ոչ միայն որպես մայր, կողակից կամ էլ տնային տնտեսուհի, այլ նաև որպես մարգարե, դատավոր (Դեբորա), իմաստուն խորհրդատու, համարձակության և խիզախության վառ օրինակ (Եսթեր, Հուդիթ):

Հրեա կանանց մասնակցությունը Իսրայելի պաշտպանությանն ունի պատմական ավանդույթ, որի արմատները գալիս են դեռևս աստվածաշնչյան հերոսուհի Դեբորայից, ով զենքը ձեռքին պաշտպանում էր հայրենիքը օտարերկրյա բռնակալներից: Ինքնաձիգը ձեռքին զինվորական համազգեստով աղջիկները սովորական երևույթ են Իսրայելում: Այնտեղ պարտադիր հիմունքներով զորակոչման են ենթակա բոլոր 18 տարեկանը լրացած չամուսնացած, երեխաներ չունեցող հրեա աղջիկները: 17 տարեկանում յուրաքանչյուր աղջիկ ծանուցագրով ներկայանում է զորահավաքակայան: Այստեղ բուժհանձնաժողովը բուժզննում է կատարում, զինվորական հոգեբանը քննում է, ապա որոշում է նրա ինտելեկտի գործակիցը: Այս ամենի արդյունքից է կախված, թե աղջիկը հետագայում որ տեսակի զորքերում կծառայի: Պաշտպանության բանակում չծառայելը դժվարացնում է քաղաքացիական կարիերան, որոշ դեպքերում նույնիսկ դարձնելով անհնար:

Հագուստի, խոսքի և պահելաձևի մեջ հրեա կանանց զսպվածությունը համարվում է նրանց բնորոշ առանձնահատկություններից մեկը դեռևս անհիշելի ժամանակներից սկսած: Յուրաքանչյուր հրեա աղջիկ կամ կին պետք է հոգա այն մասին, որ իր զգեստի երկարությունը և զգեստի թևքերի երկարությունը լինի բավական: Նույն կերպ նրանք պետք է հագնեն այնպիսի զգեստներ, որոնք չունեն վզի շատ մեծ բացվածք: Այն փաստը, որ հրեա իմաստունները կողմ են եղել կնոջ առավել զուսպ հագուստի, ունի մի քանի պատճառներ. առաջին հերթին, կրելով անզուսպ հագուստ, կինը խախտում է հրեականության բարոյականության հիմնական սկզբունքները: Երկրորդ՝ տղամարդկանց չի թույլատրվում աղոթել կամ ընթերցել Թորան, երբ նա տեսնում է կնոջ (բացառությամբ իր կնոջից կամ աղջկանից)՝ հագնված ոչ համապատասխան ձևով: Եվ երրորդ՝ բաց զգեստ հագնելով՝ կինը տղամարդուն ներշնչում է

[1] Encyclopaedia Judaica, Jerusalem, 1971, p. 627.

մեղավոր մտքեր: Զուսպ և, միևնույն ժամանակ, գեղեցիկ ու պատվով հագնվել կարողանալը մի ողջ գիտություն է: Այն, որ հրեա կանայք կարողանում են իրենք իրենց ցուցադրության չենթարկել, հարգանք է հենց սեփական անձի նկատմամբ: Բայց հրեա կանանց զսպվածությունը չի սահմանափակվում միայն հագուստով: Դրա մեջ մտնում են նաև նրանց քայլվածքը, խոսելաձևը և պահվածքի հետ կապված շատ այլ մանրուքներ: Օրինակ կան երևույթներ, որոնց մասին այլ մարդկանց մոտ խոսելը անհարիր է կնոջ համար, ինչպես նաև կան բառեր, որոնք կինը չպետք է օգտագործի: Կինը պետք է զուսպ լինի նաև իր ընտանքի ներսում, նույնիսկ երբ միայն իր ամուսնու հետ է տանը և նույնիսկ եթե լրիվ մենակ է: Մաքուր պետք է լինեն նաև կնոջ մտքերը[1]:

Անհրաժեշտ է խոսել նաև հրեա կնոջ՝ գլուխը ծածկելու սովորության մասին: Ինչպես վկայում են կրոնական գրականության որոշ ներկայացուցիչներ, հրեա ժողովրդի մոտ ընդունված է եղել, որ կինը հասարակական վայրեր գնալիս ծածկեր ոչ միայն գլուխը, այլ նաև երբեմն ծածկեր ողջ դեմքը՝ բաց թողնելով միայն աչքերը: Պողոս առաքյալը Կորնթացիներին ուղղված թղթում ասում է. «Ուզում եմ, որ դուք իմանաք, որ ամէն մարդու գլուխը Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ մարդը, և Քրիստոսի գլուխը՝ Աստուած: Ամէն տղամարդ, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ և գլուխը ծածկած պահի, անպատուում է իր գլուխը: Եւ ամնէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը, որովհետեւ այնպէս է համարւում, թե իբր գլուխն ածիլուած լինի: Քանզի, եթե կինը քօղով չի ծածկւում, թող կտրի իր մազերը: Իսկ եթէ ամօթ է կնոջ համար մազը կտրել կամ ածիլել, թող քօղով ծածկուի: Պետք չէ, որ տղամարդը իր գլուխը ծածկի, որովհետեւ նա պատկերն ու փառքն է Աստծու, իսկ կինը իր մարդու փառքն է, որովհետեւ ոչ թե մարդն է կնոջից, այլ կինը՝ մարդուց, քանզի մարդը չստեղծուեց կնոջ համար, այլ կինը՝ մարդու համար: Դրա համար կինը պարտաւոր է քօղ դնել գլխին… » (Կորնթ. 11:3-10):

Հրեական օրենքն արգելում է արտասանել Աստծո խոսքերը կամ էլ աղոթել գլուխը բաց կնոջ ներկայությամբ, քանի որ երբ կինը չի ծածկում իր գլուխը, նա համարվում է «մերկ»: Երբեմն գլուխը ծածկելու սովորությունը խորհրդանշում էր կնոջ բարձր դիրքը, նրա ազնվականությունն ու

[1] http://tolder.ru/ jfamily/woman/woman_2464.html.

անհասանելիությունը: Ցածր դասի կանայք հաճախ ծածկում էին իրենց գլուխները, որպեսզի առավել բարձր դասի կնոջ տպավորություն թողնեն:

Հրեա կնոջը կամ աղջկան խորհուրդ չի տրվում երգել տղամարդու ներկայությամբ: Կարևոր է նշել նաև այն, որ հրեա կանանց արգելվում է ձեռք սեղմել, պարել կամ որևէ մտերմիկ ժեստ անել տղամարդկանց նկատմամբ: Այս կանոնները վերաբերում են նաև նշանված զույգերին:

Ինչպես բոլոր ազգերի, այնպես էլ հրեաների մոտ կարևորվում է ընտանիք հասկացությունը: Տունն ու ընտանիքը կազմում են հրեական կրոնի հիմքը[1]: Յուրաքանչյուր հրեա իր տան դռան վրա փոքրիկ արկղ է փակցնում, որը պարունակում է զանազան մեջբերումներ Աստվածաշնչից[2]:

Յուրաքանչյուր հրեա կնոջ համար ամենակարևորը սեփական տան անդորրն ու խաղաղությունն է: Հրեական տան այդ անդորրն ու խաղաղությունը սահմանվում են խիստ կանոններով, որոնցից հատկապես առանձնանում է հարգանքը ծնողների նկատմամբ: Ծնողների հանդեպ սերն ու հարգանքը բոլոր պայմաններում երեխաների կարևոր պարտականությունն է: Ծնողներն էլ իրենց հերթին պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների մասին, հոգալ նրանց կարիքները և աջակցել նրանց: Երեխաներին նյութապես օգնելն ու ուսման տալը ծնողների ամենակարևոր պարտքն է համարվում: Ծնողների և երեխաների միջև եղած հարաբերությունները հատկապես վառ կերպով արտահայտվում են ճաշի ժամանակ՝ սեղանի շուրջ նստած: Համաձայն կանոնի՝ երեխաները չեն կարող ճաշի ժամանակ սեղանի շուրջ նստել ծնողների համար նախատեսված տեղում: Նրանց չի թույլատրվում սկսել ճաշել, քանի դեռ ծնողները չեն արտասանել օրհնության և շնորհակալության խոսքերը: Սեղանը, որը հրեաները համեմատում են խորանի հետ, արտացոլում է հրեաների ողջ ընտանեկան կյանքը և՛ տոների, և՛ աշխատանքնային օրերի ժամանակ:

Իմաստունները հրեա տղամարդկանցից մշտապես պահանջել են հոգատար վերաբերմունք կանանց նկատմամբ: Նրանք ասում են «Սի՛ր՛իր կնոջդ այնպես, ինչպես ինքդ քեզ ես սիրում, և հարգի՛ր նրան քո անձից առավել: Մի՛ ստիպիր կնոջը լաց լինել, քանզի Ամենաբարձրյալը

---

[1] **Երվանդ Տեր-Մինասյան**, Կրոնների պատմություն, Ս. Էջմիածին, 1909, էջ 289.

[2] **Байрон Г.** Иерхарт, Религиозные традиции мира, Том 1, Москва, 1996, с. 538.

ուշադիր է նրանց արցունքների նկատմամբ: Իսրայելի որդիներն ազատվեցին Եգիպտական գերությունից՝ շնորհիվ հրեա կանանց բարեհոգության: Նա, ով իր համար կընտրի բարեհոգի կին, կհամարվի, որ նա կատարել է Թորայի բոլոր պատվիրանները»[1]:

Կնոջ դերը հրեականության մեջ առավել լավ ըմբռնելու համար շատ կարևոր է նաև ուշադրություն դարձնել ամուսնության և ամուսնալուծության հարցին: Տղամարդու և կնոջ ամուսնության համաձայնությունը ամրագրվում է նշանադրությունով, որը հայտնի է «Շիդուխին» անվամբ: «Շիդուխինի» ակտը համարվում է ինչպես տղամարդու և կնոջ ամուսնանալու խոստում, այնպես էլ սպասվող ամուսնության հետ կապված պայմանների շարադրում: Իսկ «Տնայիմ»-ի ժամանակ, որը նշանադրության պայմանների շարադրումն է, սովորաբար ներկայացնում են մի փաստաթուղթ, ուր նշվում է սպասվող հարսանիքի ժամանակն ու վայրը, կողմերի ֆինանսական պարտավորություններն, այդ թվում նաև հարսնացուի օժիտը: Այն պահից, երբ տղամարդը կնոջը տալիս է մի ինչ-որ իր, սովորաբար ամուսնական մատանի՝ նրա հետ միություն ստեղծելու նպատակով, և կինը տալիս է իր համաձայնությունը՝ ընդունելով նվերը, ապա այդ կապը վերածվում է հոգևոր միության, որի խախտումը մեղք է համարվում ոչ միայն մարդու առջև, այլ նաև Տիրոջ առջև: Մատանին վերցնելու պահից սկսած՝ կինը համարվում է ամուսնացած և իր վրա է վերցնում այդ կարգավիճակին հատուկ բոլոր պարտավորությունները: Մատանին հանձնելուց հետո ընթերցում են ամուսնական համաձայնությունը, որում նշված են ամուսնու պարտականությունները կնոջ նկատմամբ՝ ըստ Թորայի: Հին ժամանակներում նշանադրությունից հետո կինը կարող էր տեղափոխվել ամուսնու տուն միայն մեկ տարի անց: Դա պայմանավորված էր նրանով, որ ամուսնու պարտականությունն էր կարգի բերել իր տունը և ապահովել այն ամենաանհրաժեշտ իրերով: Ամուսինը պարտավոր էր ապահովել կնոջը ուտելիքով և հագուստով, ինչպես նաև բժշկական ծառայությամբ և խնամքով հիվանդության դեպքում, իսկ կնոջ մահվան պարագայում կատարել թաղման արարողությունն ու կանգնեցնել հետմահու հուշարձան, փրկագնել կնոջը, եթե նա գերի է ընկել, իր մահից հետո ապահովել կնոջը գոյատևման միջոցներով, իսկ որդիներին՝ ժառանգությամբ:

Սկսած 16-րդ դարից՝ արգելվեց առանձնացնել նշանադրությունը և

---

[1] Encyclopaedia Judaica, p. 627.

կնոջ՝ ամուսնու տուն տեղափոխվելը: Հրեաների մոտ նշանադրության ծեսը չափազանց կարևոր է: Նշանադրությունը լուծարելը վատ էր դիտվում հրեաների կողմից: Ոմանք գտնում էին, որ ավելի լավ է ամուսնանալ, ապա բաժանվել, քան լուծարել նշանադրությունը: Հրեական որոշ շրջաններում նույնիսկ խուսափում են ամուսնանալ նշանադրության ծեսը լուծարող կնոջ հետ:

Հարսանիքին նախորդող երեկոներից մեկի ժամանակ հարսնացուն պետք է կատարի ծիսական լվացում: Արևելյան համայնքների մեծ մասում հարսանեկան արարողությանը նախորդող գիշերը տեղի է ունենում հարսնացուի ափերը հինայով ներկելու արարողությունը, որին մասնակցում են միայն կանայք: Սովորաբար հարսնացուն սպիտակ զգեստ է հագնում, իսկ գլուխը ծածկում է հարսնաքողով: Այդ սպիտակ զգեստը ապացույցն է նրա մաքրության: Երբ փեսային ուղեկցում են հարսի մոտ, նա քողն իջեցնում է հարսի դեմքին, և այդ ժամանակ ռաբբին օրհնանքի խոսքեր է ասում, որոնք ասվել են Ռեբեկային. «Քույ՛ր մեր, հազար ու բյուր դառնաս» (Ծննդոց 24:60): Ապա հարսնացուին իր մայրը և տղայի մայրը բերում են «Խոպպա» (շքեղ հովանի, ուր երկու իրավասու վկաները բերում են հարսնացուին): Այնուհետև փեսան մատանի է դնում աղջկա աջ ձեռքի ցուցամատին: Սրանից հետո նորապսակներին տանում են մի առանձին շինություն, ուր նրանք մենակ են մնում և, սովորաբար, մինչև հարսանիքը պահված պասից հետո առաջին անգամ հաց են ուտում:

Կան հիշատակություններ, որ ազգականների իրար հետ ամուսնանալը սովորական էր: Հետո միայն այդ սովորույթը վերացավ[1]:

Հայրության վերաբերյալ հնարավոր կասկածներից խուսափելու համար արգելվում է ամուսնանալ բաժանված կնոջ կամ այրու հետ 90 օրվա ընթացքում: Չի կարելի ամուսնանալ նաև հղի կամ կերակրող կնոջ հետ՝ մինչև երեխայի 24 ամսեկան դառնալը:

Ըստ Թորայի՝ իդեալական է համարվում այն ամուսնությունը, երբ տղամարդը, ընտրելով իր համար կին, կիսում է նրա հետ իր ողջ կյանքը և չի փնտրում մեկ այլ կին: Տղամարդը կնոջը բերում է տուն՝ որպես առաջին և միակ կին: Միակ պատճառը, որը կարող է տղամարդուն ստիպել տուն բերել մեկ այլ կին, առաջին կնոջ անպտղությունն է: Այս

---

[1] **Երվանդ Տեր- Մինասյան,** Կրոնների պատմություն, էջ 290.

պարագայում Թորան պահանջում է, որ առաջին կինը տա իր համաձայնությունը, որպեսզի իր ամուսինն ամուսնանա ևս մեկ կնոջ հետ:

Հրեական օրենքի համաձայն՝ ամուսնալուծության իրավունք ունի միայն տղամարդը: Տղամարդը կարող է գրել ամուսնալուծական նամակ և այն ցանկացած պահի տալ իր կնոջը: Բայց ամուսնալուծության իրավունքը կարելի է օգտագործել միայն խիստ անհրաժեշտության դեպքում, երբ կան այնպիսի հանգամանքներ, որոնց առկայությամբ ամուսինների միասին ապրելն անհնար է դառնում[1]: Ապահարզանի պայմանագիրը կոչվում է «գետ», որը պետք է գրված լինի ամուսնու կամ նրա ներկայացուցչի ձեռքով:

Մ.թ.ա. 1-ին դարում հրեական երկու խոշոր դպրոցների միջև վիճաբանություն առաջացավ այն հարցի շուրջ, թե ինչը կարող է արդարացնել տղամարդու կողմից ամուսնալուծության ցանկությունը: Մի դպրոցը գտնում էր, որ ամուսնալուծության պատճառ կարող էր դառնալ կնոջ թեթևսոլիկ պահվածքը, որն ստիպում է ամուսնուն մտածել, թե կինը կարող է դավաճանել իրեն: Այդ պատճառով տղամարդն իր համար պետք է ընտրեր համեստ, աշխատասեր, մեղմ բնավորություն ունեցող կին: Իսկ մյուս դպրոցը գտնում էր, որ ամուսնու ցանկացած դժգոհությունը կնոջ տնային պարտականություններում և նույնիսկ ուտելիքի պատրաստման հարցում կարող է տղամարդուն դրդել ամուսնալուծության: Որպեսզի ամուսինը դատարանից ստանա ամուսնալուծության նամակ գրելու թույլտվություն, նախ և առաջ նա պետք է դատարանին ներկայացնի այն բոլոր հանգամանքները, որոնց պատճառով ինքը ցանկանում է ամուսնալուծվել: Բայց դա այնքան էլ հեշտ չէ: Իմաստունները պատրաստ են օգտագործել ցանկացած հնարավորություն, որպեսզի մերժեն ամուսնու դիմումը: Ըստ հրեական օրենքի՝ կրոնական օրենքով ամուսնացած կինը կամ տղամարդը, եթե բաժանվեն միայն քաղաքացիական ապահարզանով և ոչ թե կրոնական, միևնույն է նրանք մնում են ամուսնացած:

Հրեականության շրջանում ընդունված է, որ կինն իր հղիության իններորդ ամսում պարտավոր է գնալ Երուսաղեմ, կանգնել լացող պատի մոտ և աղոթել երկնային Հորը: Կինն իր աղոթքում Աստծուց խնդրում է, որ ծննդաբերությունը հեշտ լինի, առողջ երեխա ծնվի և իր ողջ ընտանիքը երջանիկ լինի:

Վերջապես կարելի է շեշտել այն հանգամանքը, որ չնայած հուդայա-

---

[1] Encyclopaedia Judaica, p. 627.

կան արժեհամակարգում հրեա կնոջը տրվող կարևորությանը, երկար ժամանակ պահանջվեց հրեական՝ իր էությամբ հայրիշխանական միջավայրում, կնոջ կարգավիճակի փոփոխման համար: Միջնադարում հրեա մի շարք մտածողներ լուրջ քայլեր ձեռնարկեցին հրեա կանանց դերի բարձրացման ուղղությամբ, որոնք, սակայն, մշտապես արժանանում էին ավանդապաշտների դիմադրությանը: Հրեականության մեջ կնոջ նկատմամբ ավանդական կարծրատիպերը, կարելի է ասել, կոտրվեցին հատկապես 20-րդ դարի սկզբներին՝ կապված սինոիստական շարժման վերելքի և Պաղեստինում հրեական ազգային օջախի ստեղծման հետ, երբ հրեա կանայք ակտիվ մասնակցություն ունեցան հրեական պետականության վերականգնման գործընթացին: Անգնահատելի էր հրեա կանանց դերը Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստների հետապընդումներից հազարավոր հրեաների փրկության հարցում:

ԿԻՆԸ ՀՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լիանա Դալլաքյան

Բանալի բառեր՝ *Թալմուդ, Աստվածաշունչ, սինագոգ, Դեբորա, Թորա, Պողոս առաքյալ, «Շիդուխին», «Տնային», «Խոպպա», «գետ»:*

Սույն հոդվածը ներկայացնում է կանանց ունեցած դերը հրեական կրոնում: Առհասարակ, բավականին երկար ժամանակ է պահանջվել իր բնույթով ավանդական հրեական միջավայրում կանանց դերի բարձրացման համար: Այդ ամենը կապված է տարբեր դիրքորոշում ունեցող խմբավորումների տարակարծությունների հետ: Այնուամենայնիվ, հրեա կանայք, սկսած դեռևս հնագույն ժամանակներից, բավականին մեծ դերակատարություն են ունեցել ոչ միայն հրեական ընտանիքի և ազգային սովորույթների պահպանման գործում, այլև լուրջ մասնակցություն են ունեցել երկրի պաշտպանական գործընթացին: Դրա մասին է վկայում նաև հրեա կանանց զինվորական ծառայության անցնելու փաստը: Հոդվածում նաև անդրադարձ է կատարված հրեա կանանց հագուկապի, նշանադրության, ամուսնության և ամուսնալուծության հարցերի: Խոսվում է նաև այն մասին, թե ինչ մոտեցումներով են հրեա կանայք դաստիարակում իրենց երեխաներին: Ի վերջո, կարելի է նշել, որ հրեական հոգևոր- կրոնական, ընտանեկան և պետական կյանքում կանայք ունեն իրենց ուրույն դերն ու մասնակցությունը:

ЖЕНШИНА В ИУДАИЗМЕ

Лиана Даллакян

Ключевие слова: *Талмуд, Библия, синагог, Дебора, Тора, апостол Павел, Шидухин, Тнаим, Хоппа, гет.*

Настоящая статья посвящена роли женщины в иудаизме. Вообще, понадобилось довольно долгое время для повышения роли женщины в традиционной иудейской среде. Все это связано с разногласиями между группировками с разными позициями. Тем не менее, еврейские женщины, начиная еще с древних времен играли довольно большую роль не только в деле сохранения иудейских национальных и семейных традиций, но и имели серьезное участие в защите страны. Об этом свидетельствует факт прохождения еврейскими женщинами воинской службы. В статье также затронуты вопросы одежды, помолвки, замужества и расторжения брака еврейских женщин. В статье говорится также об основных принципах воспитания детей еврейскими женщинами. Наконец, можно отметить, что в еврейской духовно-религиозной, семейной и государстенной жизни женщины имеют свою особую роль и участие.

THE WOMAN IN THE JEWISH RELIGION

Liana Dallaqyan

Key words: *Talmud, The Bible, synagog, Deborah, Tora, Apostol Paul, "Shidukhin", "Tnayim", "khoppa", "get".*

The article considers the role of a woman in the Jewish religion. It , of course, took long time to highten the woman's role in the traditional with its nature Jewish life. That was due to the groups that manifested different veiwpoints on the issue. Nevertheless, since the old times the Jewish women have played significant role not only in the preservation of the traditional jewish family and national customs, but also have brought their active participation in the counyry's defense process. The fact is proven by the fact that the women, nowadays, have started to serve in the army. The article also focuses on the women's fashion style, engagement, marrage and devorce problems as well as the way they bring up their children. The article points out the role that the women have and bring their participation in the construction of cultural, religious, family and state lives in the country.